

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ. Աշոտ Ասատուրյանը XX դարի վերջին երեսնամյակի խորեոգրաֆ, *Երևան, «Ամրոց գրուպ», 2011, 208 էջ:*  
НАЗЕНИК САРГСЯН. *Ашот Асатурян – хореограф последней трети XX века*, Ереван, “Амроц груп”, 2011, 208 с.

*Տաղանդավոր խորեոգրաֆ, ռեժիսոր, լիբրետիստ, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Աշոտ Ասատուրյանը (1937, Թբիլիսի – 1999, Երևան) Խորհրդային Միության բալետային առաջատար բեմերում ներկայացրած իր ինքնատիպ խորեոգրաֆիկ օպերաներում խորեոդրամային հակադրելով բալետ-սիմֆոնիան՝ դարձավ խորհրդային բալետային թատրոնի նորարարներից մեկը:*

1967-ին Լենինգրադի Ն. Ա. Բիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի բալետամասերական բաժինն ավարտած (աշակերտել է նորարար-բալետամասեր Ֆյոդոր Լապուխովին) Ա. Ասատուրյանի բեմադրական դերուտը Արիֆ Մելիքովի «Լեզենդ սիրո մասին» լիամետրաժ բալետի բեմադրությունն էր՝ դիպլոմային աշխատանքը, որը 1968-ին ներկայացվեց Սարատովի Ն. Գ. Չերնիշևսկու անվան օպերայի և բալետի թատրոնում: Հենց նույն թվականին Ա. Ասատուրյանը նշանակվում է հիշյալ թատրոնի գլխավոր բալետամասեր: Գործունեության սարատովյան հնգամյակի ընթացքում իրար են հաջորդում Պ. Չայկովսկու «Շչեկունչիկը» (1968), Է. Լագարնի «Անտոնիոս և Կլեոպատրան» (1971), Ա. Խաչատրյանի «Գայանեն» (1972) և այլն:

1972-ին Ա. Ասատուրյանը հրավիրվում է Երևան՝ որպես Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի բալետամասեր. այստեղ նա բեմադրում է Ս. Բալասանյանի «Լելլի և Մեջնունը» (1973), Կ. Օրբելյանի «Անմահությունը» (1975), Մ. Ռավելի «Դափնիս և Բլոն» (1980), Գ. Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամը» (1982), Պ. Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» (1983), «Հերոսական բալլադը»՝ Ա. Բաբաջանյանի համանուն ստեղծագործության երաժշտության հիման վրա (1985, նվիրված էր

*Մեծ հաղթանակի 40-ամյա հոբելյանին), Բ. Ստրավինսկու «Օրփեոսը» (1989) և այլն:*

1991–1997-ին Ա. Ասատուրյանն աշխատում է Խարկովում որպես Ն. Լիսենկոյի անվան ուկրաինական օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի գլխավոր բալետամասեր. բեմ են բարձրանում Բ. Ստրավինսկու «Օրփեոսը» և «Հրեդեն հավթը» (ի դեպ՝ մինչ այդ՝ 1991 թ., ուկրաինական բեմում Բ. Ստրավինսկու բալետները դեռևս չէին բեմադրվել), Պ. Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» (1991) և «Շչեկունչիկը» (1992), Ա. Կաներշտեյնի «Եվպրակսիան» (Ա. Ասատուրյանն ուկրաինական արվեստի պատմության մեջ է մտել 1994-ին հիշյալ բալետի անդրանիկ բեմադրությամբ), «Միսֆոնիկ պարերը»՝ Մ. Ռախմանինովի համանուն ստեղծագործության երաժշտությամբ (1997) և այլն:

Նկատենք, որ ստեղծագործական գործունեության 31 տարիների ընթացքում Լենինգրադում, Սարատովում, Սվերդլովսկում (Եկատերինբուրգ), Երևանում, Թբիլիսիում, Չելյաբինսկում, Խարկովում և Բաքվում Ա. Ասատուրյանը բեմադրել է 23 բալետ:

Ա. Ասատուրյանի ստեղծագործության մասին հայերեն, ռուսերեն և ուկրաիներեն լեզուներով գրախոսականներ է ն տպագրվել Երևանի, Մոսկվայի, Կիևի, Խարկովի, Սարատովի, Սվերդլովսկի ու Բաքվի թերթերում և հանդեսներում, իրենց մենագրություններում նրա գործունեությանն են անդրադարձել Մարգարիտ Տեր-Միմոնյանը, Վալերի Նեստերովը, Էռա Բարուսչևան, Հասմիկ Մարկոսյանը և ուրիշներ: Մակայն մինչ օրս Ա. Ասատուրյանի մասին չկար բալետագիտական ամփոփ ուսումնասիրություն: Ահավասիկ այդ բացն է լրացնում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Նազենիկ Մարգարյանի ներկայացվող մենագրությունը, որը լույս է տեսել

Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և անհրաժեշտ քայլ է հայկական բալետի պատմության ստեղծման ճանապարհին: Աշխատության խմբագիրն է - ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը:

Սույն մենագրությունը գրելիս Ն. Սարգսյանն իր առջև նպատակ է դրել ոչ միայն նկարագրել Աշոտ Ասատուրյանի կյանքն ու ստեղծագործական ուղին, այլև ներթափանցել նրա ստեղծագործական լաբորատորիան, բացահայտել կատարողների, կոմպոզիտորների, դիրիժորների, նկարիչների հետ բալետմայստերի աշխատանքի առանձնահատկությունները, երևակել նրա մտքերի ընթացքը՝ ներկայացման ստեղծման պրոցեսում: Դա հեղինակին լիովին հաջողվել է:

Աշխատությունը շարադրված է արխիվային հարուստ նյութի, խորեոգրաֆիկ բեմադրությունների մի մասի տեսագրությունների, ինչպես նաև արվեստագետի ժամանակակիցների ու գործընկերների հիշողությունների հիման վրա: Ա. Ասատուրյանի անձնական արխիվում գտնվող նյութերը հեղինակին սիրահոժար տրամադրել է բալետմայստերի այրին՝ Հայաստանի ժողովրդական արտիստ Էլվիրա Մնացականյանը: Հանգամանորեն հետազոտվել են Ա. Ասատուրյանի՝ Երևանում և Խարկովում ստեղծած բալետների բեմադրությունների տեսագրությունները, բալետների սցենարների ձեռագրերը, սցենարներ, որոնց մի մասը բեմական կյանքի ուղեգիր ստացավ, իսկ մյուս մասն այդպես էլ մնաց թղթի վրա, պարզաբանագրեր (էքսպլիկացիաներ) և խորեոգրաֆիկ պարտիստուրների գրառումներ պարունակող և բալետների բեմադրության ընթացքում գրառված բալետմայստերի մտորումներն ամփոփող տեսուրերը, «Գայանե» և «Լեգենդ սիրո մասին» բալետների համար արված կոստյումների հեղինակային էսքիզները, պարբերական մամուլում և մասնագիտական հանդեսներում նրա բեմադրությունների մասին հրատարակված գրախոսականները և հոդվածները, ներկայացումների ազդագրերը, ծրագրերն ու լուսանկարները, տարաբնույթ այլ փաստաթղթեր:

Ա. Ասատուրյան-խորեոգրաֆի առավել լիարժեք կերպարի, ինչպես նաև կենսագրության մանրամասերի ընդգրկման նպատակով Ն. Սարգսյանը դիմել է պարողներին, կոմպոզիտորներին, դիրիժորներին, ռեժիսորներին, արվեստաբաններին, ովքեր համագործակցել ու բարեկամություն են արել նա հետ կյանքի տարբեր փուլերում: Եվ այդպես ծնունդ է առել Ա. Ասատուրյանի մասին ուշագրավ հուշագրությունը:

Մենագրության կառուցվածքը կուռ է ու տրամաբանական և բաղկացած է երկու բաժնից:

Առաջին բաժնում՝ «Աշոտ Ասատուրյանի ստեղծագործական կենսագրությունը», Ն. Սարգսյանը ներկայացնում է այն՝ համեմտելով արվեստագետի ընկերների ու գործընկերների, այդ թվում՝ Ռուսաստանի վաստակավոր արտիստ, արվեստագիտության թեկնածու Գենադի Ալբերտի, Հայաստանի ժողովրդական արտիստ, ՀՄՍՀ պետական մրցանակի դափնեկիր Վիլեն Գալստյանի, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Գրիգորյանի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Յուրի Դավթյանի, Ռուսաստանի վաստակավոր արտիստ Վիկտոր Դավիդովի, Հայաստանի ժողովրդական արտիստ Հովհաննես Դիվանյանի, ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Ռոբերտ Էլիբեկյանի, Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուդոլֆ Խառատյանի, Հայաստանի ժողովրդական արտիստ Լորետա Հովանյանի, Ուզբեկական ՄՍՀ և Թուրքմենական ՄՍՀ պետական մրցանակների դափնեկիր Նիկոլայ Մարգարյանցի, Ռուսաստանի մշակույթի վաստակավոր աշխատող Վալերի Նեստերովի, Հայաստանի ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանի, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Չեպալովի, ՌԴ ժողովրդական արտիստ Բգոր Ստեցյուր-Մովայի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի և այլոց հուշերով ու հիշողություններով: Հեղինակի հետ ընթերցողը մեծ հետաքրքրությամբ թերթում է Ա. Ասատուրյանի կյանքի և գործունեության էջերը՝ Թբիլիսի, Լենինգրադ, Մարտով, Երևան, Խարկով, Երևան, հրնթացս ծանոթանում դիրիժորի, կոմպոզիտորի, նկարչի և կատարողի հետ նրա աշխատանքին:

Գրքի երկրորդ բաժինը՝ «Աշոտ Ասատուրյանի ստեղծագործությունը», նվիրված է նրա բեմադրական արվեստի առանձնահատկությունների բացահայտմանը: Ն. Սարգսյանը քննության է առնում գերազանցապես այն բեմադրությունները, որոնք մեզ են հասել տեսագրությունների տեսքով: Ա. Ասատուրյանի ստեղծագործությունը երաժշտագետը վերլուծել է 1960–90-ականների գեղարվեստական մշակույթը և, ի մասնավորի, բալետային թատրոնը պայմանավորած միտումների համատեքստում: Ինչպես նշում է Ն. Սարգսյանը, «Ասատուրյանն իր ներկայացումները ստեղծում էր պարտիտուրով, և ոչ թե լսողությամբ (այսինքն՝ ձայնագրությունը կամ նվագակցողի նվագը լսելով): Մինևույն ժամանակ նա կլավիրը հրաշալի ընթերցում էր թերթից, գիտեր բեմադրվող բալետի գործիքավորման բոլոր առանձնահատկությունները: Նա ուսումնասիրում էր երաժշտության տեսության բոլոր ենթաբաժինները՝ տարրական տեսություն, հարմոնիա, երաժշտական ստեղծագործության վերլուծություն և պոլիֆոնիա: Դա նրան հնարավորություն էր ընձեռում իր բեմադրություններում բացահայտել երաժշտության բոլոր նյութանները, դրանք արտահայտել խորեոգրաֆիկ ձևում, երաժշտությունն, ասես, դարձնել տեսանելի» (էջ 15): Մյուս կողմից՝ երաժշտական և պոլիֆոնիային նյութի խորը և բազմակողմանի ուսումնասիրմանն ու իմաստավորմանը նպաստում էին Ա. Ասատուրյանի ընդգրկուն գիտելիքները համաշխարհային երաժշտական արվեստի, գրականության, պատմության և փիլիսոփայության բնագավառներում:

Ն. Սարգսյանն անդրադառնում է Ա. Ասատուրյանի բալետներում երաժշտության դերին, սցենարների սպեցիֆիկային, քննության առնում «Թեմա վարիացիաներով», «Շչելկունչիկ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Եվպրակսիա» բեմադրությունները: Վերլուծական բաժինը եզրափակում են «Դափնիս և Քլոեն», «Օրփեոսը» և «Միմֆոնիկ

պարերը», որոնք բալետագետը պայմանականորեն անվանում է «պոլիֆոնիկ» կամ «երկձայն»: «Ինչպես և «Դափնիս և Քլոեն» ու «Օրփեոսը», գրում է հեղինակը, «Միմֆոնիկ պարերը» բալետ է պոլիֆոնիկ երկձայն սցենարով, ձայներից մեկը դրվագներն են Ռախմանինովի կենսագրությունից, կրկին, ինչպես «Օրփեոսում», առակաբանություն XX դարի երաժշտի մասին: Մյուս ձայնն Ասատուրյանի ինքնակենսագրությունն է, որն ավարտվում է նրա մահով» (էջ 169): Եվ իսկապես՝ «Միմֆոնիկ պարերը» դարձավ բալետմայստերի բեմադրած վերջին բալետը:

Ա. Ասատուրյանի բալետների ուսումնասիրության արդյունքում Ն. Սարգսյանը եզրակացնում է. «Քանի որ Ասատուրյանի 23 բալետներից 14-ը մեկ գործողությամբ են, ուստի ակնհայտ է խորեոգրաֆի հակումը դեպի սիմֆոնիկ ձևերը, մասնավորաբար տնատա-սիմֆոնիկ, ինչպես նաև վարիացիոն ցիկլերը: «Միմֆոնիա» բառը բավական հաճախ կարելի է ընթերցել Ասատուրյանի բալետների ծրագրերում...» (էջ 116): Ապա՝ «Ա. Ասատուրյանը դրամաբալետի կատաղի հակառակորդ էր» (էջ 117):

Մենագրության կարևոր արժանիքներից է Ա. Ասատուրյանի գրական ժառանգության հրապարակումը. խոսքը «Ֆսսի – ՎպՏՏՊ ԽՏՎՈՑՈՐՈ» և «ԿԲՈՋՊՎՈՍ ՊԵՈՒ ՌԽՒ ՉԱՍՌՍՈՒ տՏՊՉՈՆՆ» հոդվածների ու «Լեյլի և Մեջնուն», «Եղիցի լույս», «Հերոսական բալլադ», «Հրեղեն հավը» և բեմական մարմնավորում չստացած «Մետամորֆոզներ» բալետների նրա կազմած լիբրետոների մասին է:

Աշխատության մեջ տեղ է գտել նաև Ա. Ասատուրյանի մասին առկա գրականության ցանկը:

Գիրքը, որը հրատարակել է «Ամրոց գրուպ» հրատարակչությունը, իր պոլիգրաֆիկական բարձր որակի համար «Գրքարվեստ» – 2011» հանրապետական չորրորդ մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է երկրորդ մրցանակի՝ «Մեր ժամանակակիցը» անվանակարգում: